

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

ՎՐԱՅԱԿԱՆ ԵՒ ԻՐԱՆԱԿԱՆ ԱՌԱԾ-ԱՍԱՅՈՒԱԾՔՆԵՐԸ

Գաղտնիք չէ, որ հայ ժողովրդական բանարուեստը հարուստ է բազմաթիւ առածներով եւ ասացուածքներով, որոնք ունեն բարոյական, կրօնական, տնտեսական, քաղաքական, սոցիալական եւ այլ խորհուրդներ: Հայ ժողովրդական առած-ասացուածքները ի մի է բերել բանահաւաք Սարգիս Հայկունին իր «Էմինեան ազգագրական ժողովածոյի» մէջ (1906), իսկ գիտականօրէն դասակարգել եւ խմբաւորել է անուանի բանագէտ Արամ Ղանալանեանը «Հայկական առածանի» գրքում (1951, 1960):

Առած-ասացուածքներով հարուստ են նաեւ հարեւան՝ Վրաստանը եւ Իրանը, որոնց գրական, մշակութային ժառանգութեան մասին հայ իրականութեան մէջ այսօր քիչ է խօսուում՝ չնայած նրան, որ կան թարգմանուած առանձին հեղինակների գործեր, ուսումնասիրութիւններ, բանասիրական աշխատութիւններ: Այդ թարգմանութիւնները մեր օրերում, կարծես, մոռացութեան է մատնուել: Ուստի՝ առած-ասացուածքների այս անդրադարձը համարում ենք կարեւոր եւ անհրաժեշտ: Նկատելի է, որ քիչ են նաեւ հարեւան երկրների գրողներին, նշանաւոր անձանց նուիրուած միջոցառումները, ցերեկոյթները, ինչի պատճառը, մեր կարծիքով, հասարակութեան ընդգծուած ուղղութիւնն է դէպի Եւրոպա:

Տակաւին 5-րդ դարում Մ. Խորենացին, լաւ գիտակցելով հոգեկան մաքառման նշանակութիւնը, թոյլ չի տուել Պարսկաստանի մեծարում, պարսկական հոգեւոր արժէքների եւ աւանդների տարածում, քանի որ ժողովուրդը 5-րդ դարում շարունակում էր կռիւն ու մաքառումը՝ դարասկզբի կորցրած ինքնուրոյնութիւնը վերականգնելու համար¹: Ընդունելով Արեւմուտքի բարձր մշակոյթը, մտքի նուաճումները, աշխարհիկ ուղղութիւնը՝ Մ. Խորենացին, նշում է, որ թէեւ հայ ժողովուրդը ապրում եւ գործում է Արեւելքում, բայց իր մշակոյթով նա պատկանում է արեւմտեան, եւրոպական տեսակին: Այս կողմնորոշումը դարեր ի վեր համակել է ժողովրդին եւ ամրապնդուել է մեր յետագայ ողջ պատմութեամբ: Այսօր ընթերցողի ձեռքին կարելի է տեսնել անգլիական, գերմանական գրականութիւն, բայց ոչ օրինակ՝ վրացական, իրանական կամ արեւելեան պոեզիա:

Նախ սահմանանք **առած** եւ **ասացուածք** տերմինները՝ օգտուելով էտ. Զրբաշեանի եւ Հ. Մախչանեանի «Գրականագիտական բառարան»-ից: Առածները գեղարուեստական սեղմ, պատկերաւոր ասոյթներ են, որոնք ունեն ճանաչողական մեծ արժէք եւ արտացոլում են ժողովրդի կեանքի պատմական, կենցաղային, սոցիալ-քաղաքական պայմանները, յարաբերութիւնները, բնաւորութեան եւ խառնուածքի առանձնայատկութիւնները, բարոյական հասկացութիւնները, ազգային սովորութիւնները, հաւատալիքն ու կրօնը, հոգեբանութիւնն ու աշխարհայայեացքը²: Յաւելենք, որ առածներին բնորոշ են դիւրամբոնելիութիւնը, կարճառօտութիւնը, սեղմութիւնը, պարզորոշութիւնը, պատկերաւորութիւնը: Ասացուածքը սեղմ, արտայայտիչ ձեւով բնութագրում է կեանքի այս կամ այն երեւոյթը առանց այլաբանական հնարների եւ փոխաբերական

¹ Տե՛ս Թամրազեան Հ., Հայ ֆնմադատութիւն, գ. 1, Երեւան, 1983, էջ 171:

² Տե՛ս Զրբաշեան Էտ., Մախչանեան Հ., Գրականագիտական բառարան, Երեւան, 1989, էջ 24:

պատկերների, ուղղակի եւ անմիջական ձեւով³։ Ժողովրդական բանաւոր ստեղծագործութեան այս տեսակները ունեն մի շարք աղբյուրներ, ասացուածքները իրենց բնոյթով շատ մօտ են առածներին, բայց տարբերում են նրանով, որ միտքն արտայայտում են ուղղակի, առանց միջնորդաւորման եւ այլաբանութեան։

Ստորեւ ներկայացնենք Գ. Յովսէփեանի «Աշխարհի ժողովուրդների իմաստութեան գանձարան»-ում վկայուած վրացական առած-ասացուածքները⁴։ Այսպէս՝

Ամէն աղուես իր պոչն է գովում։

Գայլը թողածի համար է փխտսում, հովիւը՝ փարածի։

Երբ կովին կովկիթով մօտեցան, իրեն եզ անուանեց, երբ լուծ բերին՝ իրեն կով անուանեց։

Լաւ է կապաղած շուն ունենաս, քան կապաղած կին։

Շունն էլ աղ ու հացը չի մոռանում։ (373-374)

Վերոնշեալ առածներում, ինչպէս տեսնում ենք, էական դեր ունեն կենդանիները։ Ղանալանեանը փաստում է, որ կենդանական հին զրոյցներն ու առածները օգտագործում են մարդկային արատները եւ հասարակական կեանքում տիրող անհաւասարութիւնն ու արդարութիւնը, շահագործումն ու կողոպուտը մերկացնելու համար⁵։ Վրացական առած-ասացուածքներում յիշատակում են շունը, գայլը, աղուեսը, կովը, որոնք խթան են վրաց միջավայրը, բնաւորութիւնը, կենցաղը ներկայացնելուն։ Նման առած-ասացուածքների բազմազանութիւնը բացատրւում է նաեւ նրանով, որ չափազանց հարուստ է Վրաստանի Հանրապետութեան կենդանական աշխարհը։ Ինչպէս մեզանում, այնպէս էլ վրաց հասարակութիւնում իւրաքանչիւր կենդանու վերագրուել է այս կամ այն յատկանիշը։ Բերենք հայկական նոյնանման առած-ասացուածքների օրինակներ։ Այսպէս՝

Արջին ձագը փամազլըղ չըլլար։ (57)

Եզին քաշածը մինակ իր կաշին գիտէ։ (170)

Գիլի փորը իր օրումը չի կշտանայ։ (28)

Հաւին հարիւր հետ կուր քու, էլի կրուցը գեղնին կը քսի։ (57)

Եզը ինձ համար կալ չի անում, ուրիշի համար պապարագ ա անում։ (44)

Վրացական առած-ասացուածքներից շատերը, այսպէս ասած, ունեն իրենց համարժեքները մեր լեզուում։ Ինչպէս՝ «Ամէն աղուես իր պոչն է գովում» (վրացական) - «Աղուեսին հարցրին վկադ ով է, ասա՛վ՝ իմ կուղին (պոչ)» (հայկական), «Գայլը թողածի համար է փխտսում, հովիւը՝ տարածի» (վրացական) - «Է՞ծը ջանի դարդն ա, դասաբը՝ եղի», «Տէրը տարածին է փոշման, գելը՝ թողածին», «Ագուար տարածն է լալի, բլբուլը՝ թողածը» (հայկական)։

Հայաստանի սահմանակից Իրանը եւս հարուստ է նոյնպիսի առած-ասացուածքներով։ Բերենք մատնանշող օրինակներ.

³ Նոյն տեղում, էջ 28։

⁴ Վրացական եւ իրանական առած-ասացուածքները փաղել ենք Գոհար Յովսէփեանի «Աշխարհի ժողովուրդների իմաստութեան գանձարան» (Երեւան, 2006) գրքից, իսկ հայկական առած-ասացուածքները՝ Արամ Ղանալանեանի «Առածանի» (Երեւան, 1960) գրքից։ Սոյն հրատարակութիւններից կատարուող մէջբերումների էջերը կը տրուեն տեքստում՝ փակագծերի մէջ։

⁵ Ղանալանեան Ա., Առածանի, Երեւան, 1960, էջ X։

Ազոաւը ուզեց կաքաւակի պէս քայլել՝ իր քայլն էլ մոռացաւ:

Եզը ընկնում է դանակաւորը շաքանում է:

Գլուխը նապաստակի է, աչքերը՝ օձի:

Էշը որքան Քրիստոսին Երուսաղէմ փանի, էլի էն էշն է: (367)

Բերուած օրինակներից վերջինին մեր լեզուում հաւասարարժէք են հետեւեալ առած-ասացուածքները. «Էշը քառասուն անգամ Երուսաղէմ գնացեր՝ նորէն էշ է մնացեր», «Էշը թակելով ջորի չի դառնալ», «Էշը թիմաւելով քեհլան (նժոյգ) չէղնի», «Ազոաւը ինչքան լողանայ, դագ չի լինի»:

Ինչ խօսք, էական նշանակութիւն ունի առած-ասացուածքների լակոնիկ ձեւը, բայց եւ յոյժ պատկերաւոր լինելու, փիլիսոփայական հզօր մտքեր արտայայտելու հանգամանքը: Բերենք վրացական այնպիսի առած-ասացուածքներ, որոնք խորհելու տեղիք են տալիս: Այսպէս՝

Ամուսինը փուն կառուցեց, կինը քանդեց, կինը փուն կառուցեց, սաքանան էլ չկարողացաւ քանդել:

Երեսով փուած պաքաւը կուլ չի գնայ:

Լաւ է խելոքի հեպ կոխ գնաս, քան յիմարի հեպ քէֆ անես:

Խղճի խայթը մարդակի հարուածքից վաւ է:

Ում առաջ մէջք ծռես, քար կը դնի: (373-374)

Մեզ յայտնի իրանական նմանատիպ առած-ասացուածքներից են՝

Ամէն դարպաս կարող ես փակել, բայց մարդու բերանը չես կարող:

Ասեղը առաջ քեզ խրիր, յեպոյ մախաթը՝ ուրիշին:

Գողը աղմկոյ փեղը շաւ է սիրում:

Երբ բախադ քեզանից երես է թեքել, շիլայ ուրելուց էլ աքամներդ կը ջարդուի:

Յոյսը յուսահափութեան մէջ է ծնում:

Ձրի քացախը վճարովի մեղրից էլ քաղցր է:

Աչքդ փակեցիր, բանի փէրը չես:

Աչքի սուրմայ թոցնող:

Ով մարդ արարած կ'ուզես ինքնաթիռ նստիր, կ'ուզես կառք, վերջում քեզ փանողը չորս փայլն է:

Օրար հողը որքան էլ շքեղ լինի, հայրենիք չի դառնայ:

Սողալու համար ծնումածը թռչել չի կարող:

Ով ասաց եւ արեց՝ մարդ է, ով չասած եւ արեց՝ առիւծ, ով ոչ ասաց եւ ոչ էլ չարեց՝ արու աւանակ է:

Այնպեղ որպեղ խելոքը խոսքով է համոզում, յիմարը ձեռքերն է գործի դնում: (367-368)

Վերոնշեալ առած-ասացուածքներն իրենց հաւասարարժէք, նոյնարժէք ձեւերն ունեն մեր լեզուում, ինչպէս՝ «Լաւ է խելոքի հեպ կոխ գնաս, քան յիմարի հեպ քէֆ անես»

(վրացական) - «Գիտունի հետ քառ քառի, անգետի հետ փլաւ մի ուտի» (հայկական), «Ամէն դարպաս կարող ես փակել, բայց մարդու բերանը չես կարող» (իրանական) - «Բերանը քառասուն լիտր անլուայ բուրդ չի բռներ» (հայկական):

Այսպիսով, առած-ասացուածքները, որոնք յօրինուել եւ պահպանուել են ժողովրդի գոյութեան ողջ պատմութեան ընթացքում, բանահիւսութեան ամենատարածւած ստեղծագործութիւններն են, որոնք կենսունակ են մեր օրերում եւս: Ժողովրդական բանահիւսութեան այս կարեւորագոյն տարրերը օժտուած են մեծ կիրառելիութեամբ: Բազմաթիւ ընդհանրություններ են առկայ հայկական, վրացական, իրանական առած-ասացուածքներում, մշակոյթներում: Մի շարք առած-ասացուածքներ արտայայտում են նոյն կամ մօտ իմաստ:

ՎԱՆՏԵՐ ՊԷՐՊԷՐԵԱՆ

Երեւանի Պետական Համալսարանի Հայ բանասիրութեան ֆակուլտետի եւ Մանկավարժութեան եւ կրթութեան զարգացման կենտրոնի մագիստրանտ

ԳՐԱԲԱՐԵԱՆ ԱՍՈՅԹՆԵՐ

Յորժամ երթայցես ընդ ոսոխի քում առ իշխանն, ի ճանապարհի տուր զհաշիւն զերծանել ի նմանէ:

Իմաստութիւն ծածկեալ եւ գանձ անյայտ, որ օգուտ է յերկոցունց:

Եւ որպէս կամիք թէ արասցէն ձեզ մարդիկ, այնպէս արասցիք եւ դուք նրանց:

Որ փորէ խորխորատ ընկերի իւրում՝ ինքն լցցէ զնա:

Որդւոյ նենգաւորի բարի ինչ մի՛ լինիցի:

Շրթունք ճշմարիտք հաստատեն զվկայութիւն:

Ի միում մարմնի անդամս բազումս ունիմք, եւ անդամքն ամենայն զնոյն գործ ունին:

Ծառայ իմաստուն տիրեսցէ տերանց անմտաց: